«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Չարենցյան դասեր
ԱՌԱՐԿԱ	Գրականություն
ՀԵՂԻՆԱԿ	Ալվարդ Ներսիսյան
ՄԱՐԶ	Երևան
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	«Շահամիր Շահամիրյան» կրթահամալիր

Երևան 2023

Բովանդակություն

1. Ներածություն----------2
2. Կարսը Չարենցի ստեղծագործության մեջ----------6
4. «Երկիր Նաիրի» վեպը----------9
5. Նյութի դասավանդումը ----------18
6. Եզրակացություն ----------19
7. Գրականության ցանկ----------19

Ներածություն

Այսօր մենք ապրում ենք խառնակ ժամանակներում: Այսօր դարձյալ կարծես թե կանգնած ենք լինել-չլինելու խնդրի առջև: Ժողովուրդն իրեն խաբված է զգում. 44-օրյա պատերազմի արդյունքնում ունեցանք տարածքային և մարդկային ցավալի կորուստներ, այս օրերին հայաթափում են Արցախը աշխարհի անտարբերի աչքի առջև, և վերջը կարծես չի երևում: Օրեցօր աճում են տագնապները, հարաճուն հարցերը պատասխան չեն ստանում, որովհետև պատասխան տվող չկա. . .

Սակայն, երբ հայացք ենք գցում ոչ հեռավոր անցյալին, հայելային անդրադարձով կարծես տեսնում ենք նույն օրհասական վիճակը: Շատ չի անցել, ընդամենը 100 տարի, և թվում է՝ այդ ժամանակաշրջանը շատ թարմ պիտի լիներ մեր հիշողության մեջ, կամ գոնե պատմությունից դասեր քաղած պիտի լինեինք: Բայց. . . «դարավոր ոսոխը» (բնութագրումը Չարենցինն է) դարձյալ իր յաթաղանն է դրել մեր կոկորդին ժամանակակից զինատեսակների տեսքով, իր լկտի պահանջներն է ներկայացնում մեզ, և մենք մատաղացու գառների պես միայն մայում ենք՝ խղճա մե՛ե՛ե՛զ:

Երևի Հովհաննես Թումանյանի «Չարի վերջը» լավ չենք հասկացել, որ թշնամին քո տվածով երբեք չի բավականանա և չի հանգստանա, մինչև քեզ չհոշոտի, մանավանդ որ դրա ծրագիրը վաղուց է մշակել:

Ինչու Չարենց:

Դպրոցական ծրագրում Չարենցի «Երկիր Նաիրի» վեպին անդրադառնում են շատ հպանցիկ, այնինչ այսօրվա հայի սեղանի գիրքը պիտի լիներ. իսկ քանի՞սն են այն կարդացել. . .

Անդրադարձիս պատասխանը՝ ստորև:

Նպատակները

Հետազոտական աշխատանքիս նպատակները.

1. Ձևավորել ազգային գիտակցություն ունեցող քաղաքացի:
2. Փորձել գրականության միջոցով վեր հանել շուրջ 100 տարի առաջվա պատմական անցուդարձը և զուգահեռներ անցկացնել մերօրյա իրադարձությունների միջև:
3. Մեզ հուզող խնդիրների պատասխանները որոնել և բացահայտել գրական ստեղծագործության միջոցով:
4. Բացահայտել սովորողների վերաբերմունքը ազգային անցյալ և ներկա խնդիրների վերաբերյալ:
5. Ազգային արժանապատվություն և լավատեսություն, խորը հայրենասիրություն ձևավորել սովորողների մեջ գրականության միջոցով:
6. Պետականաշինության գործում սովորողի մեջ ձևավորել պատասխանատվության զգացում և այդ դժվարին գործում սեփական մասնակցության կարևորում:
7. Ձևավորել ինքնաճանաչում:
8 Սովորողների մեջ ձևավորել գրական ստեղծագործությունը հասկանալու, եզրահանգումներ անելու, սեփական կարծիք ձևավորելու և գիտելիքները հարստացնելու կարողություն:
9. Փորձել միջառարկայական կապ ձևավորել՝ հայ գրականություն և հայոց պատմություն:
10. Սեր ձևավորել սեփական ժողովրդի գրականության հանդեպ:

Եղիշե Չարենց

Գլուխ 1

Քո անունի , Չարե՞նց,
Ասոնանսն է՝ «Արև»-
Եվ բառն –հանճարե՞ղ . . .
Եղիշե Չարենց

Իր հանճարի և արժեքի խոր գիտակցումով տրված ինքնագնահատական, որն անժխտելի է իր ծնունդից՝ 1997թվից 126 տարի անց: Չխամրող այս արևը իր ժողովրդի ուղին լուսավորելու է մինչև աշխարհի վախճանը: Հայ մանուկն ու հասուն այրը սրբազան երկյուղածությամբ են արտասանում «Ես իմ անուշ Հայաստանի»-ն՝ Վիլյամ Սարոյանի բնութագրությամբ՝ «Մեր հողին, մեր պատմության նվիրված ամենեն գեղեցիկ երգը, գովաբանական աղոթքը»:

Չարենցն այսպես մտել է յուրաքանչյուր հայի տուն, յուրաքանչյուր հայի հոգու մեջ և դարձել նրա հարազատը , մտերիմը, սրտակիցը:

Հովհաննես Թումանյանը հայ մարդուն ուղեկցում է նրա ողջ կյանքում, նրա ձեռքից բռնում թոթովախոս տարիքից և կյանքի ուղեկիցն ու խորհրդատուն դառնում նրա գիտակցական կյանքում, որովհետև Թումանյանը ազգային ոգու կրողն է և այդ ոգու բացահայտողը:

Չարենցն այլ է. նա հասուն տարիքի բանաստեղծ է : Նրան հասկանալու համար հարուստ ներաշխարհ և բարձր գիտակցություն է անհրաժեշտ:

Մեր կյանքի այս լարված ու հարափոփոխ ժամանակներում Չարենցը վերստին ապացուցեց, որ ինքը ապրող, ներկա բանաստեղծ է, ամենահետաքրքիր և ժամանակակից գրական գործիչն ու մարդ անհատականությունը: Ժամանակն իր սրբագրումն ու ճշգրտումն է անում կյանքում, և դրան մշտապես մասնակից է դարի խոշորագույն բանաստեղծներից մեկը:

Չարենցն ապրեց լի ու հարուստ, բայց ծանր ու դժվարին մի կյանք, որն այսօր «լեգենդ» է դարձել: Նա դարձավ հազարամյակների խորքից եկող ժողովրդի հոգևոր սերմի ծնունդը:

Իր ողջ կյանքի ընթացքում նա ոչ մի օր գրիչը վայր չի դրել: Գրել է պոեմներ ու բանաստեղծություններ, ռուբայիներ ու էպիգրամներ, դիֆերամբներ ու օրագրեր, վեպ, ուսումնասիրություններ և այլն:

Չարենցն իր ժամանակի մեջ էր և իր մեջ կրում էր այն ահավոր ողբերգությունը, որի առջև կանգնած էր նա՝ հայրենիքի կորստի և հյուսիսի « կարմիր սարսափի» առաջ:

Նա ապրեց անկումների ողբերգական մի ժամանակաշրջանում, ինքը դարձավ այդ ժամանակի զոհը, իր կյանքով հատուցեց իր դավանած գաղափարների համար, երբեք չդավաճանեց իր սկզբունքներին և բարձր բարոյականությանը:

Կանխատեսի զգացողությամբ նա պիտի գրեր.

Ես եմ հիմա՛- մի պոետ և իմ անունը –Չարենց-
Պիտի վառվի դարերում , պիտի լինի բա՛րձր ու մեծ:
Ես եկել եմ դարերից ու գնում են հաղթական
Դեպի դարերը նորից, դեպի վառվող ապագան. . .

Ժամանակի ձեռքը իր տեղը դրեց ամեն ինչ, տիղմն ու փրփուրը նստեցին, բայց Չարենցի անունը չնսեմացավ, այլ ավելի պայծառացավ: Չարենցը գրում, խոսում ու գործում էր իր երկրի տիրոջ իրավունքնով, որովհետև ոչ միայն կռվել էր նրա համար, այլև փորձել էր ստեղծել իր և իր սերնդակիցների երազած հայրենիքը: Նա հավատով էր խոսում լուսավոր գալիքի մասին և պատգամում երկրի սիրով ապրելու, երկրի ցավով տառապելու

ճշմարտությունը: Հետագայում Լուի Արագոնը Չարենցին պիտի դասեր 20-րդ դարի մի քանի խոշորագույն բանաստեղծների շարքում: Թումանյանը պիտի գրեր. «Նորերից Չարենցն է, որ անպայման բանաստեղծ է, տաղանդավոր տղա է, բանաստեղծական անկեղծ խառնվածքով»:

Իսկ Տերյանը, որի ազդեցությունը մի ժամանակ կրում էր Չարենցը , ավելացրեց. «Այսօր հատկապես, առայժմ գոնե, Եղիշե Չարենցն է միակ իսկական պոետը կովկասահայ իրականության մեջ»:

Մեծ նկարիչ Մ. Սարյանի բնութագրմամբ . «Նա «օժտված էր ստեղծագործական ծայրահեղ լարման հասնելու անհերևակայելի ուժով: Նա ոգևորվում էր ինքնամոռացության աստիճանի և հուսահատվում՝ հասնելով խոր հիասթափության»:

Շիրվանզադեն այսպես է բնութագրել նրան. «Դեմոնական ուժ կա էդ պստիկ մարմնի մեջ»:

Գլուխ 2

Նախքան «Երկիր Նաիրի» վեպին անդրադառնալը , որը իր ծննդավայրի՝ Կարսի անկման պատմությունն է , նախ խոսենք այն մասին, թե ինչ դեր ուներ Կարսը բանաստեղծի կյանքում. :

Ծնունդով կարսեցի էր, լույս աշխարհ է եկել 1897 թ. մարտի 13-ին: Հայրը գորգավաճառ Աբգար Սողոմոնյանն էր, իսկ մայրը՝ Թեկղի Միրզոյանը: Նրանք Կարս էին եկել Մակու քաղաքից (Պարսկաստան): Հետաքրքրիր է, որ Չարենցը, ծնված լինելով Կարսում, իրեն համարում էր մակվեցի. դա արտացոլված է նրա ստեղծագործություններում. «Ես եկել եմ հեռու՛ Իրանից, հայրենիքս է Խանի Մակուն» կամ «Եղիշե Չարենց, բանաստեղծ՝ ծնված Մակու քաղաքում»:

Չարենցը ծնունդով Կարսից էր: Կարսում էլ ստացել է իր նախնական կրթությունը, այնտեղ են ձևավորվել նրա գրական հետաքրքրությունները, ընկերական միջավայրը: Տարվա եղանակներին նվիրված նրա բանաստեղծությունների շարքը տպագրվել է դպրոցական «Գարուն» ալմանախում, առաջին գիրքը՝ «Երեք երգ տխրադալուկ աղջկան»՝ նույնպես:

Այստեղ է նա սիրահարվել Աստղիկ Ղոնդախչյանին և Կարինե Քոթանջյանին և նրանց անունները անմահացրել իր երգերում:

Այստեղ էր, որ հորից թռցրած մեկ ռուբլով պիտի գներ Տերյանի «Մթնշաղի անուրջներ» ժողովածուն, ինչն էլ պիտի ձևավորեր պատանի բանաստեղծի գրական ճաշակը:

Հետաքրքրասեր պատանին այցելել է Անի, հանդիպել հետազոտող Նիկողայոս Մառին, զրուցել հետը և տպավորություն թողել գիտնականի վրա: Այնուհետև իր ընկեր Վիվանի

հետ ծրագրել է շուրջերկրյա ճանապարհորդություն, որը, սակայն, ավարտվել է Հյուսիսային Կովկասի Արմավիր կայարանում, որովհետև Ցարիցինում կռիվներ էին ընթանում: Այդ ծրագրից որպես հիշատակ մնաց միայն 1916-1917 թվականներին գրված սքանչելի մի բանաստեղծություն՝ «Հարդագողի ճամփորդները», որը մի ամբողջ սերնդի չիրականացած երազների մասին է:

Մանկուց Չարենցի մեջ տպավորվել են կարսեցիների կերպարները, նրանց խանութները, մականունները, նրանց շուրջ հյուսված երգիծական պատմությունները, որոնք էլ հետագայում տեղ գտան նրա «Երկիր Նաիրի» վեպում:

Նա սիրում էր երկար կանգնել Կարս գետի վրայի «Չուգունե» կամրջին,նայել վազող ջրերին, ապա հայացքը սահեցնել դեպի Առաքելոց եկեղեցին, դեպի բերդը: Հաճախ էր լինում նաև երկաթուղային կայարանում:

Սիրում էր լինել և՛ մարդկանց մեջ, և՛ մեկուսանալ, ուսումնասիրել մարդկանց: Աստիճանաբար ձևավորվում էր մի անհատականություն, որի համար արդեն նեղ էր նաիրյան այդ քաղաքը:

Չարենցն իր կենսագրականում նշել է, որ սեփական աշխատանքով սկսել է ապրել 16 տարեկանից սկսած: Առաջին գրքի տպագրությունից նա չնչին գումար է է ստացել. առաջին վաստակը: Դա էր նաև պատճառը, որ շուտ լքեց հայրենի տունը ,և սկսվեցին անվերջանալի դեգերումները՝ ռազմաճակատ, Մոսկվա, Երևան, դարձյալ Կարս, որտեղ աշխատում էր պարենավորման կոմիտեում՝ սննդամթերքով ապահովելու պատերազմից քայքայված տնտեսություններին: Հետո՝ ուսուցչություն Բաշքյադիկլար գյուղում՝ կողքը հավաքած 8-15 տարեկան երեխաների և մի քանի այբբենարան:

1920թ. -ին Չարենցը վերստին եղել է Կարսում, սակայն դա նրա վերջին այցելությունն էր, որովհետև նույն թվի հոկտեմբերին Կարսն ու մարզը անցնում են «դարավոր ոսոխի» վերահսկողության ներքո:

Կարսի պատկերն ու հիշատակները անսահման ջերմությամբ վեր հառնեցին 1919թ. գրված «Տաղ անձնական»-ում .

Թողած Կարսում, գետի ափին, տունս՝ շինված անտաշ քարով,
Կարսը թողած, Կարսի այգին ու հայրենի երկինքը մով
Եվ Կարինե Քոթանճյանին անգամ չասած մնաս բարով—
Ամնց եմ կենում հիմա օտար քաղաքների ճանապարհով:

. . . . . .

Ու էլ ամե՛ն մեղքի համար սիրտս հիմա ունի ներում.
Պիտի անդարձ ես հեռանամ, պիտի գնամ՝ ա՛չքս է հեռուն.

Թե Կարինե Քոթանճյանին տեսնեք Կարսի փողոցներում—
Ասե՛ք նրան՝ Չարենցն ասավ - մնաս բարո՛վ, մնաս բարո՛վ…

Կարսի պատկերը հետագայում տեղ գտավ նրա «Չարենց նամե» (1922) և «Homo sapiens» (1928-1929) պոեմներում: Կարսը նրա մանկությունն է: Ահա հայրը՝ «դեմքը՝ արծաթե ափսե, վրան քիթը՝ կեռ մի դանակ. . . », ահա մայրը՝ «գլխին՝ Թեհրանի լաչակ», ահա ինքը՝ «Ես անգույն Կարսում մեծացա»:

Օ՜, հաճա՜խ, հաճա՜խ, բարեկա՜մ,
Որպեսզի հոգիս չմրսի-
Ես հիշել եմ վայրկյան-վայրկյան
Կանաչած այգին Կարսի. . .

Կարսը նրա աչքերի առջև հառնում էր որպես մանկության կարոտ, որը շուտով պիտի մորթվեր:

«Homo sapiens»-ում դարձյալ Կարսն է, ուր բախվում են ձևավորված անհատն ու գորշ միջավայրը: Մտապատկերի առջև ինքն է՝ տասնվեց տարեկան հասակում: Դեմքը հոգսաշատ է, ինքը՝ միջահասակ , վտիտ, ուսերը՝ նեղ, մազերը՝ գանգուր, ճակատը՝ գունատ:

Գավառացի պատանի կար մի խեղճ
Նաիրյան այդ խեղճ քաղաքում:
Նա կարդում էր: Սուզվում էր անդարձ
Ցնորքների հորձանքը: - Գրքի էջերից
Երազվում էր նրան տիտանային մի մարդ. . .

Եվ գավառական այդ խեղճությամ մեջ նա՝ 16 –ամյա այդ պատանին, որոշում է,
«Որ ինքը դառնալու է կյանքում մի հանճարեղ պոետ»:

Երբ արդեն իջնում էր Չարենցի ողբերգական կյանքի վարագույրը, Չարենցն անսահման մի կարոտով դարձյալ մտաբերում էր իր մանկության քաղաք Կարսը, և դա բնական է. մայրամուտից առաջ մարդիկ միշտ մտաբերում են իրենց սկիզբը՝ ծննդավայրը, ծնողներին և հուշ դարձած մարդկանց:

. . . Սակայն ո՞ւր է Կարսը, և ո՞ւր է պարտեզում մրսող այն տղան,-
Որ ուներ երազներ բուրյան, և ո՞ւր է տխրաձայն Տերյանը. . .

ԿԱՐՍ

Գլուխ 3

Մինչ «Երկիր Նաիրի» վեպի մասին խոսելը՝ անդրադարձ կատարենք «Դանթեական առասպել» պոեմին:

Կարսի կործանումը պատկերելուց առաջ նա սեփական աչքերով ականատես էր եղել հայկական մեկ այլ ոստանի՝ Վանի կործանմանը Առաջին աշխարհամարտի տարիներին, երբ ինքը կամավորականների շարքերում հասել էր Վան: նա տեսել է պատերազմի մահաբեր դեմքը և դեմ առ դեմ բախվել նրան:

Պատերազմը չէր բերել ո՛չ փրկություն, ո՛չ ազատություն. «ավետյաց երկիրը» մնացել է ոսոխի ճիրաններում, իսկ արյան շուրջպարն իր հետևից թողել էր միայն մա՛հ, մա՛հ, մա՛հ. . .

Եվ իմաստնացած պատանի բանաստեղծը բարձրացնում է մարդկային ուղեղում տրոփող հարցը.

Ինչու՞ է երազն այս աշխարհավեր
Կախվել մեր գլխին այսպես կուրորեն:
Ինչու՞ են փռում այսքան ցավ, ավեր,
Հողմերը այս չար եՙրբ պիտի լռեն:
Եվ ո՞վ է լարում այսպիսի դավեր,
Կյանքը դարձնում նզովյա՛լ գեհեն:

Եվ հետագայում ապրելու ուժ գտած և «Ծիածան» շարքը ոգած բանաստեղծը ցավով պիտի հարցներ.

Եվ միթե մարդիկ այստեղ չեն նայել
Երբեք հեռուներն այս լա՛վ աշխարհի,
Ուր արևը բյո՛ւր հրաշք է վառել,
Որ մարդու հոգին խանդավառ, բարի՝
Գգվի մի անմար հիացքով ջահել
Ամեն մի խոտի , ամեն մի քարի:

Վերադառնանք Չարենցի վեպին:

Կարսի ասքը Չարենցը գրեց 1921-1924թթ. , իսկ 1922-1925թթ. հրապարակեց «Նորք» հանդեսում, ապա 1926թ. -ին վեպը լույս տեսավ առանձին գրքով:

Ինչու այն կոչվեց «Երկիր Նաիրի», որովհետև հայրենի Կարսը վերածվում էր խլված, հեռացող հայրենիքի խորհրդանիշի:

Վեպի հակիրճ «Առաջաբան»-ում Չարենցը վեր է հանում հայրենիքին վերաբերող հարցերը, որոնք «կերել են իր սիրտը»:

«Ինչքա՜ն, ինչքա՜ն անգամ հարցրել եմ ես ինձ, թե ի՞նչ է, վերջապես — Նաիրին: Գուցե քեզ տարօրինակ թվա այս հարցը, սիրելի՛ ընթերցող: Բայց դա նույնքան է բնական, որքան այն հարցը, թե ով ենք մենք վերջապես — նաիրցիներս: Ի՞նչ ենք մենք և ո՞ւր ենք գնում: Ի՞նչ ենք եղել երեկ և ի՞նչ պիտի լինենք վաղը: Ամեն, ամեն անգամ, երբ նման հարցերը կերել են սիրտս,— մեկը, մի ուրիշը կարծես, ուրվականի նման ելնելով օրերից, օրերի մշուշից, տվել է ուղեղիս չարախինդ մի հարց. — «Չէ՞ր կարելի արդյոք տեսնել մարմնավոր, պատկերացնել հաստատ երկիրը Նաիրի: Նու, թեկուզ հենց իրենց՝ նաիրցիների կյանքում, կենցաղում: Շոշափել այդ երևույթը — նաիրյանը — սրտով, շոշափել մարմնավոր, պատկերել երկրային... Գուցե սուտ է Նաիրին, Նաիրին — չկա... Գուցե — հուշ է միայն, — ֆիկցիա, միֆ: — Ուղեղային մորմոք, սրտի հիվանդություն»:

Մի կողմից՝ քարտեզի վրայից ջնջված հայրենիք, մյուս կողմից՝ հայրենիքի հավիտենական տենչ: Ասվածի խորհրդանշական պատկերն է Կարսի բերդը, որը վեր է հառնել առասպելական փառքով, բայց և անփառունակ անկում է ունենում:

Վեպի նյութը Առաջին համաշխարհային պատերազմն է , ուր վճռվում է Հայաստանի պատմաքաղաքական բախտը:

Անկախ ու միացյալ հայրենիքի փոխարեն՝ ամոթալի ծանր պարտություններ, և այս ամենին ուղղված գրողի հայացք, որն առաջին հայացքից կարող է թվալ ծաղրական, բայց իրականում այն ողբերգական է ու անսփոփ:

Չարենցն այս վեպը գրեց, որովհետև իր ծննդավայրի կորստյան կսկիծը ելք էր որոնում:

Ծննդավայրը մնաց թշմանուն, բայց ժողովուրդը պետք է ապրեր ու բուժեր իր խոցված մարմնի վերքերը:

Հայաստանում հաստատվեցին խորհրդային կարգեր, բայց Չարենցը «խելամտորեն» չլռեց: Կարմիր գիծ էր քաշվել երեկվա ու այսօրվա միջև, և շատերը կա՛մ հեռացել էին, կա՛մ մոլորվել և չգիտեին իրենց անելիքը:

Իսկ Չարենցը գրեց իր ծննդավայրը հավերժացնող այս երկը: Քաղաքական տեսանկյունից, թվում էր, թե ռուսներն այս անգամ թուրքերից պիտի ամբողջովին գրավեին Հայաստանը: Ազգային-ազատագրական պայքարը վերելք էր ապրում: Դարավոր նիրհից կարծես արթնացել էր երկիր Նաիրին, կարծես թե հաղթանակը մոտ էր:

Դրանք բարդ ու հակասական ժամանակներ էին: Ազգային երազանքները թև էին առնում, բայց մոխրանում, և անդառնալի պարտություններն ու կորուստները հերթագայում էին իրար:

Չարենցը հայրենիքի իրական հենարաններ էր որոնում, բայց տեսնում էր միայն «միրաժ, ֆիկցիա, միֆ, ուղեղային մորմոք, սրտի հիվանդություն»: Եվ ավերվում է առասպելից ծնված հայրենիքը, ու բանաստեղծը մորմոքով արձանագրում է «Վահագն» պոեմում. `

Մեր կյանքի հիմերը անդունդը ընկան

Եվ արնոտ միգում ճարճատում են դեռ. . .

Իր բոլոր 60 հերոսներով հանդերձ՝ վեպի գլխավոր հերոսն ինքը՝ քաղաքն է: Վեպը սկսվում և ավարտվում է քաղաքի նկարագրությամբ: Այդ ամենին հետևում և հսկում է գրողը՝ պատմության վկան ու ժամանակագիրը:

Չարենցի խոհերի արտահայտիչը դառնում է վեպի իրական հերոսը՝ Մազութի Համոն, ով կրում է հեղինակի դրամատիկական ապրումների ծանր բեռը: Նա նույն խորությամբ է տանում ազգային ողբերգությունը:

Վեպի առաջին գլուխը վերնագրված է «Քաղաքը և բնակիչները»՝ Տերյանի բնաբանով՝ «Այստեղ Նաիրյանն է նազում»:

Նկարագրված են մարդիկ, կենցաղը, հիշարժան վայրերը՝ Առաքելոց եկեղեցին, Վարդանի կամուրջը, Սլլան քարը, Ճգնավորի մատուռը: Այստեղ հեքիաթը, առասպելականն ու իրականը ասես իրար են խառնվում:

Բնականոն ու ալարկոտ կյանքով ապրում է քաղաքը մինչև 1914թ. , մինչև պատերազմի սկսվելը: Քաղաքը ներքաշվում է պատերազմի մեջ :Կազմավորվում են կամավորական ջոկատներ, այդ շարժումը մեծ թափ է առնում. բոլորը ոգևորված են. . . Եկել է հայրենիքի ազատության համար կռվելու ժամանակը: Կամավոր են գրվում ամենքը, և ցանկացողների թիվն այնքան շատ է, որ նրանց թիվը սահմանափակվում է: Եկել է հույսի իրականացման ժամանակը: Վանի, Բիթլիսի, Տիգրանակերտի, Խարբերդի ազատագրումը օրվա խնդիր է:

Այդ գործը կազմակերպող և իրականացնողներ էին պետք: Կարսում իրադարձությունների կենտրոնում է Մազութի Համոյի՝ Համո Համբարձումովիչի նախատիպը՝ ՀՀԴ կուսակցության Կարսի տեղական կոմիտեի պարագլուխ Համազասպ Նորհատյանը: Նա և նրա նմանները իրենց անունները սրբագործեցին Սարդարապատում, Ղարաքիլիսայում, Բաշ Ապարանում:

Այսպես թե այնպես Մազութի Համոն դառնում է վեպի գլխավոր գործող անձը: Իսկ ո՞վ էր Մազութի Համոն: Նա «Լույս» նավթարդյունաբերական ընկերության ներկայացուցիչն էր կամ նաիրյան Արամազդը, կամ «վերջին արքայակերպ նաիրցին»:

Վեպի երկրորդ գլուխը կոչվում է «Դեպի Նաիրի», որի համար բնաբան է դարձել հեղինակի «Ամենապոեմ»-ից ՝ «Հնամյա հին մի երազ, երկիր մի՝ դարերի ուրու. . . » տողը:

Անամոք ցավով է սկսում Չարենցը այս հատվածը՝ գրելով. «Սրտի բուռն տրոփով սկսեցի գրել Նաիրյան այդ քաղաքի պատմությունը, բայց հիմա, երբ ուզում եմ անցնել հետագա օրերին ու դեպքերին, դառն, ծանր մի մորմոք բարձրանում է սրտիս, ուտում է սիրտս»: Շարունակելով միտքը՝ նա պատմում է խորհրդանշական մի պատկեր, թե ինչպես մի օր փողոցով անցնող մի մարդու է տեսել: Այդ մարդը գլխին դրած տանելիս է եղել իրենից շատ ավելի մեծ ու ծանր դեղնավուն մի դագաղ , փողոցում եղել է անձրև ու ցեխ , մարդը քայլել է ցեխաջրում, դեմքը չի երևացել. կքած է եղել բեռան տակ: «Ինչի՞ համար էր տանում այդ դժվար բեռը, ինչու՞ էր ցանկանում ինչ գնով էլ լինի տեղ հասցնել այդ մահվան մահիճը, ինչի՞ պիտի հանդիպեր տեղ հասնելիս»: Եվ հարցնում է ինքն իրեն. «Այդպես էլ ե՛ս, ընթերցո՛ղ, ու՞ր եմ գնում: ինչու՞ եմ հպել , բայց ո՛չ ողնաշարիս, այլ գանգիս ուղեղային դագաղանման այս բեռը, , երբ ուզում եմ տեղ հասցնեմ. . . ու՞ր: Եվ մի՞թե այնտեղ, տքնությանս վերջում, որպես նվիրական, սիրելի մի մեռել- չպիտի՞ պատկերանա ինձ երկիրը Նաիրի, որին դամբանելու համար տանում եմ ահա ես խոհերիս տողաշար դագաղը- տանում եմ կամքիս հակառակ, որովհետև, այո, հարկավոր է տանել: Չ՞է որ, այո՛- թաղել է հարկավոր բոլոր մեռելներին, որքան էլ նրանք սիրելի ու հարազատ լինեն. չ՞է որ, միևնույնն է, հակառակ դեպքում կքայքայվեն նոքա՝ զազրելի և ախտաբույր, այնպես որ անգամ սիրահարը կզզվի պաշտելի աճյունից»:

Հետագա շարադրանքը շարունակում է՝ ցավն ու արցունքը կուլ տալով: Կենտրոնում նորից կանգնում է նաիրյան կործանված փառքը վերագտնելու կոչված նորօրյա հերոսը՝ Մազութի Համոն:

Որքա՜ն Չարենցը կցանկանար, որ իր հերոսը արժանանար ոչ թե կարեկցանքի ու խղճահարության, այլ լիներ հզոր ու հաղթական, որ նրա բոլոր ձեռնարկումները պսակվեին հաղթանակով, որ ծնվեր մեր ազգի նորօրյա Վարդանը, բայց դժբախտաբար դեպքերի պատմական ընթացքն այլ է. . .

Երբ սկսվում է պատերազմը, առաջինն այդ մասին բարձրաձայնում է Համոն և ժողովրդին մղում ազատամարտի: Նրա ճառը ուղեկցվում է երաժշտական նվագախմբի շառաչով, կեցցեներով, ուռաներով ու կորչիներով: Այսպես է քաղաքը դիմավորում պատերազմը՝ նրա հետ կապելով իր բոլոր ազգային երազանքների իրականացումը: Մազութի Համոյի կողքին կանգնում են բոլոր նրանք, ովքեր հավատում էին հայրենիքի փրկությանը: Բայց քնած չէին և ընդդիմադիր ուժերը: Այս կերպարները նույնպես ունեին իրենց իրական նախատիպերը: Սրանք բարոյալքում էին հայ զինվորներին, թռուցիկներ տարածում, ըստ որի՝ դարավոր ոսոխը՝ թուրքը, ավելի լավ է, քան հայ քաղաքական հակառակորդ կուսակցությունը, որն այդ տարիներին կռվում էր հայրենիքի փրկության համար: Եվ Չարենցը գրում է. «Ամեն ինչ լավ էր գնում, նույնիսկ կարելի է ասել կատարյալ հանգիստ ու խաղաղություն կտիրեր նաիրյան այդ քաղաքում, եթե չլինեին մի շարք ստոր , անպատկառ , նաիրադավաճան մարդիկ, որոնք խանգարում էին նորաստեղծ նաիրապետության հանգիստը: Եվ ո՞վ գիտե՝ կկատարվեին արդյոք հետագա դժբախտ ու ահավոր դեպքերը, եթե չլինեին այդ «ստոր , անպատկառ, նաիրադավաճան» մարդիկ:

Երևակայու՞մ եք՝ դրանք՝ այդ մարդիկ, դեմ էին «գրավված վայրերի» պաշտպանությանը. ինչ-որ խաղաղություն էին պահանջում այդ ազգուրաց մարդիկ, երբ դեռ չէր գետնահարված ոսոխը, ավելին՝ երբ իր վերջին հորդաները հավաքած՝ թափթփուկ բանակներով պատրաստվում էր գրավված վայրեր խուժել, վերստին հրի ու սրի մատնել այնքան դժվարություններով վերջապես ազատագրված երկիրը Նաիրի»:

Այդ նույն ժամանակ ահա «այդ ստոր, դավաճան, նաիրուրաց մարդիկ դեզերտիրություն էին քարոզում նաիրյան բանակում և խոսում էին հաշտության մասին. ու՞մ հետ. - հավիտենական ոսոխի ու Հավիտենական Հիվանդի , որին նաիրցի մի ռազմիկի քացին անգամ բավական էր,-ինչպես ասում էր Մազութի Համոն, - որպեսզի նա հավիտենապես փչեր իր շունչը. . . Ուշ, շատ ուշ գլխի ընկան. . . և ուշ, շատ ուշ հարկ եղած խստագույն միջոցների դիմեցին հիշյալ լրբերի նկատմամբ նաիրյան իշխանավորները»:

Բայց թշնամին ոտքն արդեն դրել էր վառվող քաղաքների մոխիրների վրա:

Չարենցը շարունակում է գրել ավելի խոր կսկիծով. Մազութի Համոյի մորմոքը իր մորմոքն էր:

Այնքա՜ն ոգևորությամբ էր սկսվել պատերազմը, որն աստիճանաբար ցույց է տալիս իր իրական դեմքը՝ գների թանկացում, մթերքի պակաս, բանակ մեկնող, բայց պատերազմի երես չտեսած երիտասարդներ, անհամար զոհեր ու դասալիքներ, հուսահատություն, խուճապ: Բայց կամավոր խմբերը գնացքներով դեռևս մեկնում էին ճակատ՝ ազատագրելու «ավետյաց երկիրը»:

Վեպի երրորդ գլուխը կոչվում է «Երկիր Նաիրի»: Այն նախապես պիտի վերնագրվեր «Հեղափոխությունը Նաիրի երկրում»: Սա վեպի այն գլուխն է, որը չէր ուզում գրել Չարենցը. ձեռքը չէր գնում: Ոչ միայն այն պատճառով, որ այս գլխում էր նկարագրելու քաղաքի կործանումն ու ազգային երազի ավարտը: Այստեղ նա անուղղակիորեն գնահատական էր տալիս 1914-1918թթ. պատմաքաղաքական իրադարձություններին:

Բանն այն էր, որ Մազութի Համոն և նրա կողմնակիցները իրենց հույսը դրել էին ռուսների վրա, իսկ ցարական զորքը, առաջ գալով ու նահանջելով, ի վերջո մեծ ավերածություններ պատճառեց Արևմտյան Հայաստանին: Այդպես ընկավ նաև Վանը: Դիվանագիտական խաղերի արդյունքնում ռուսները հետ քաշվեցին, ուր անարգել մտան թուրքերը և սրի քաշեցին բոլորին, որովհետև հայերը աղ ու հացով էին դիմավորել իրենց հավատակից ռուսներին:

Կյանքի էր կոչվում «Հայաստանն առանց հայերի» ծրագիրը:

«Անապատում եղած միրաժի նման եղավ, գետնահարվեց վերջին պատրանքով շնչավորված հնամյա երազը, գետնահարվեց-արդյո՞ք ընդմիշտ. . . առտնին զառանցանք: Ու մնացին ավերակներ»:

Այնուհետև 1917թ. , հեղափոխություն, ռուսները հետ են քաշում իրենց զորքերը և ասպարեզը թողնում թուրքերին, որոնց դեմ կանգնած էին նաիրյան թույլ ու անպաշտպան գնդերը, որոնց էլ իրենց հերթին բարոյալքում էին հեղափոխության «տեղական քարոզիչները»:

Ջլատվում են հայկական ուժերը, և արդյունքում՝ պարտություն:

Մազութի Համոն մի վերջին ճիգով ի մի է բերում հայկական ցանուցիր ուժերը և ուղարկում ճակատ: «Դեպի կռի՛վ, ի զեն, վերջի՛ն անգամ ի զեն, տառապյալ նաիրյա՛ն ժողովուրդ», - ասում է նա:

Սխա՞լ էր , երբ ժողովուրդն իր վերջին ուժերն էր համախմբում , դավաճանություն չէ՞ր միթե, երբ հայրենիքի զինվորներին թելադրում և ուղղորդում էին թշնամական ուժեր և հանում հայրենիքի դեմ:

Պահպանվել է մի ամոթալի փաստաթուղթ, որը կազմել է Հայաստանի կոմունիստների (բոլշևիկների) կենտրոնական կոմիտեն ՝ թվագրված՝

Թիվ 218, Բաքու ,1920, սեպտեմբերի 20

Բերեմ միայն 2 կետ.

1. Թուրքիան այլևս նախկին Թուրքիան չէ և Հայաստանի նկատմամբ ագրեսիվ նպատակներ չունի:
2. Հայ բոլշևիկ կոմունիստների խնդիրը պետք է լինի՝ արագացնել հանրապետական Հայաստանի պարտությունը, որով և կարագացվի Հայաստանի խորհրդայնացումը:

Այս նպատակի համար պետք է՝

ա. Կազմալուծել հայկական կռվող բանակը բոլոր միջոցներով. . . և այլն:

Այս ամենը արեցին իրենց սև գործը: Իրականությունն այն է, որ հայկական զորքերի գնդապետ Մազմանյանը ինքնասպան եղավ հուսահատությունից:

Վեպի հերոսը՝ Մազութ Համոն, կախաղան բարձրացավ, թեև Չարենցը «Մահվան տեսիլ»-ում պիտի հուսահատ աղաղակներ.

Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,

Ուրիշ ոտքեր կախաղանին թող մոտ չգան:

Ստացվեց, որ թշնամու «բարեկամությունը ավելին է, քան հայրենիքի ազատությունը, որը պիտի որակվեր իբրև նացիոնալիզմ»:

Կործանվեց Կարսը, դատարկվեց նահրցիներից, ոսոխը դարձավ քաղաքի տերը: Ուրվական քաղաքի միակ տերը դարձյալ մնում է Մազութի Համոն:

Մի՞թե այս էր երազել Համոն:

«Իսկ ի՞նչ եղավ. եկավ օրը, կարծես թե իրողություն դարձավ երկիր Նահրին: Իսկ հետո՞. . . : Իսկ հետո այն, որ Հավիտենական Հիվանդի հորդաներից սարսած, մահամերձ թափթփուկ բանակներից սարսափահար՝ նախիրների նման պուկ տվին նահրյան բանակները. . . »:

Այս տողերը կարծես այդ օրերին լրագրերում տեղ գտած հոդվածներից հատված լինեն: Նման միտք էր հայտնվել ՀՀ դաշնակցության Հայաստանի կոմիտեի «Զանգ» պաշտոնաթերթում: 1918, թիվ 19, խմբագրական:

«Ռուսական բանակը նահանջեց, 1918թ. ապրիլին թուրքերը վերցրին Կարսը, իսկ հայկական բանակը բարոյալքված փախչում էր. . . »

«. . . Մնացել էր Բերդը միայն. . . Ու՞ր է, ու՞ր է ուժը, ուր է կորովն հնամյա նահրյան ցեղի, ու՞ր է»:

Պատասխան չկա: Հարցի լուռ վկան Բերդն է: Քաղաքի վերջին նահրցին՝ Մազութի Համոն, աշտարակին կանգնած, եռագույնի երերուն փայտին հենված, աղիողորմ ողբում է ու գոչում. «Չի՛ լինի». . .

Բայց եղավ այն, ինչը մեր պատմության համար օրինաչափ է դարձել:

1920թ. հոկտեմբերի 31-ին թուրքերը գրավեցին քաղաքը, և սկսվեց սպանդը: Ականատես Գարեգին Հովսեփյանը պատմում է, որ հոկտեմբերի 14-ին հայերը պետք է հարձակման անցներին: Ունեին 40 000- անոց բանակ, թվաքանակով գերազանցում էին թշնամուն և լավ զինված էին:

Բայց Կարսն ընկավ. . . Բանակը բարոյալքված էր, թնդանոթաձիգներն ու զորքը թողել էին ու փախել, և թշնամին, առանց դիմադրության հանդիպելու, գրավել էր քաղաքն ու Բերդը:

Գարեգին Հովսեփյանը գրում է. «Ազգերի պատմության մեջ դժվար է գտնել այնպիսի խայտառակ պարտություն, ինչպիսին մերն էր այդ օրերին: . . . Լավ կհամարեինք՝ մի քանի հազար կոտորվեինք բերդի տակ, բայց պաշտպանելով մեր հայրենիքը, մեր պատիվն ու ընտանիքը, քան անարգ փախստյամբ փրկեինք մեր կաշին: Ու՞մ մեղադրել և վերագրել այս երևույթը. ժամանակի կառավարությա՞ն, զորքի ղեկավարությա՞ն, ժողովրդի անտարբերությա՞ն և հայրենասիրության պակասի՞ն, բոլշևիկների քարոզչությա՞ն, ինչպես պնդում են ոմանք. . . »:

Չարենցը հեծությամբ շարունակում է կատարվածի նկարագրությունը ,և ինքն էլ ողբում իր երկրի կորուստների համար, կորուստներ, որից մարդ խելագարվել կարող է:

Քաղաքը սրի է քաշվում, իսկ Մազութի Համոն իր համախոհների հետ Բերդի վրա գերի է ընկնում և կախաղան հանվում: Համոյի գլխավերևում թշնամու թափթփուկները տախտակ են փակցնում, որի վրա գրված էր «Մ. Հ. Ա. Ն. », որը նշանակում էր՝ Մազութի Համո՝ Արքա Նաիրի». չ՞ի հիշեցնում Հիսուսի խաչելությունը՝ «Հիսուս Նազովրեցի՝ Արքա Հրեից»:

Համոն էլ դավաճանվեց, ինչպես Հիսուսը, դավաճանվեց յուրայինների կողմից. ովքե՞ր էին կազմալուծում բանակը, ովքե՞ր էին մատնում. հայրենակից յուրայինները:

Ավարտվում է ողբերգության վերջին արարը: Ցնդում է միֆը, մեծ, իրական Նաիրիի պատրանքը: Մեռնում է երկիրը Նաիրի:

Այսպես կորչում է ամեն ինչ, քամին քշում է նաիրյան հունդը, և ցավի անամոք մի կանչով Չարենցը հառնում է. «Ու՞ր, ու՞ր են հրաշագործ նաիրցիները հիմա, ու՞ր է հազարամյա Նաիրին. . . չկա, ոչինչ չկա հիմա»:

Իր օրագրային գրառումներից մեկում (14. III. 1934) Չարենցն այսպիսի տողեր ունի. «Իսկ ի՞նչ է մահը- եթե ոչ ամենաածանր, ամենամեծ «տանուլ տալը», անհաջողությունը:-Եվ այս չէ՞ պատճառը, որ առողջ, լիարյուն ազգերը… չեն սիրում հայերին,որ հանճարեղ տանուլ տվող դժբախտներ և անհաջողներ են, քստմնելի լինելու աստիճան թշվառ ու անհաջողակ…: Եվ ինչ մոլորություն ,որ իբր թշվառությունը վեհ է և ազնիվ… Արգահատելի է թշվառությունը, ինչպես մահը, և ուրիշ ոչինչ»:

Թուրքիայի ճնշմամբ 1921թ. ռուս-թուրքական պայմանագրով Հայաստանից պոկեցին Նախիջևանը և Ղարաբաղը, իսկ մնացած մասը՝ 29 000 ք/կմ տարածքով, կոչվեց Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն:

Խաչվեց Մազութի Համոն, իսկ նրա նմանները հետո պիտի փտեին բոլշևիկների նկուղներում, անհետ կորչեին սիբիրներում կամ դառնային վտարանդի: Փոխվեցին

ժամանակները, հաջորդները պիտի ծաղրեին նախորդների գործը, բայց և ճզմվեին կեղծ գաղափարախոսության մամլիչի տակ:

Պետք էր ապրողների փշրանքները հավաքել և կարողանալ ապրել: «Արյուն, ճիշտ է, շատ է հոսել, սակայն կենդանի մնացածներից շատերն արդեն ազատ են վերոհիշյալ ուղեղային մորմոքից ու սրտի հիվանդությունից և այսօր իրենց երկիրն են շինում»,- իր ընթերցողին կարծես մխիթարում է բանաստեղծը:

Չարենցը վեպում այսպիսի համեմատություն ունի. «Ձիերը քարացած նիոբեների նման մնացին տեղում»: Նիոբեն հունական դիցաբանությունից հայտնի այն մայրն է, որին զրկեցին իր 12 զավակներից, և նա դարձավ արցունք թափող քարե արձան:

Թեև նա երբեմն ժպտում է իր արցունքների միջից, բայց… նա չի մոռացել իր զավակներին:

Մենք էլ ենք հաճախ ժպտում, բայց չենք մոռանում մեր կորուստները, պարտություններն ու մեր նահատակված որդիներին: Ինչպես Չարենցն էր ասում. «Հասկացողը կհասկանա»:

Ամփոփեմ վեպի «Առաջաբան»- ի վերջին հատվածով:

«Գուցե ճիշտ որ՝ միրաժ է Նաիրին, ֆիկցիա, միֆ, ուղեղային մորմոք, սրտի հիվանդություն… Իսկ նրա փոխարեն կա այսօր մի երկիր, որ կոչվում է Հայաստան, և այդ հին երկրում ապրել են երեկ և ապրում են այսօր շատ սովորական մարդիկ՝ սովորական մարդու սովորական հատկություններով: Եվ ուրիշ ոչինչ: Ոչ մի «Երկիր Նաիրի», այլ միայն մարդիկ, որ ապրում են այսօր աշխարհի այն անկյունում, որ կոչվում է Հայաստան»:

Այս ծանր խոհերից հետո հայացքս դարձնում եմ դեպի մեր օրերը: Ծ՞ատ բան է փոխվել արդյոք.

Այսօր Արցախը կորցրինք, հուսանք՝ ժամանակավորապես. «Հողմերը այս չար ե՞րբ պիտի լռեն»(ԵղիշեՉարենց):

Չարենցը ո՛չ երկրի ղեկավար էր, ո՛չ քաղաքագետ, ո՛չ ռազմավար: Գրող էր, ժողովրդի բախտով տառապող գրող, ով դասագրքի պես մեր սեղանին դրեց անցյալի մեր սխալները և դրանց հետևանքով՝ մեր կորուստները:

Մեծանում է նոր սերունդ, որի երիտասարդ հոգիներում բազում հարցականներ կան:

Ի՞նչ դասեր պիտի տանք նրանց, որ չխարխափեն անորոշության խավարում: Այդ դասը տալիս է մեր գրականության հանճարը՝ Եղիշե Չարենցը.

Եվ որպեսզի նրանք էլ Չարենցի պես չասեն. « Հոգ չէ, որ մեր օրերն անցան տենդի պես, կյանքը դարձավ անմխիթար զառանցանք», ուրեմն պիտի հասկանանք.

«Եվ որքա՜ն, դեռ որքա՜ն ջանքեր են հարկավոր,

Եվ որքա՜ն տքնություն ու անկարելի խոյանք,

Որ պարտեզի յուրաքանչյուր բուռ հողը դառնա արգասավոր,

Եվ երջանիկ դառնա կյանքը…»

(«Տաղ եկվորներին ողջունելու համար»)

Դասավանդում

Նախապես հանձնարարել ստեղծագործությունը կարդալ:

Դասի ժամանակ դասարանը բաժանել 3 խմբի , որոնցից յուրաքանչյուրը կներկայացնի վեպի 3 գլուխներից մեկը:

Նախօրոք վեպից դուրս գրած և պատմությունից քաղած օրինակներով վիպական իրադարձությունները կհամադրեն պատմական իրադարձությունների հետ:

Աշակերտները իրենց կարծիքները կհայտնեն, կվերլուծեն և իրենց լուծումները կառաջարկեն «Եթե ես լինեի» խորագրի տակ:

Կփորձեն, այսօրվա իրականությունից ելնելով, լուծումներ առաջարկել «Ես կարծում եմ»: խորագրի տակ:

Վերջում աշակերտները կգրեն, թե ինչ դասեր քաղեցին «Երկիր Նաիրի» վեպից:

Եզրակացություն

Բնագիրը կարդալուց և նյութը հանգամանորեն քննարկելուց հետո աշակերտները ավելի հստակ պատկերացում կկազմեն նախորդ դարի 20-ական թվականներին Հայաստանի շուրջ ծավալված պատմական անցուդարձի մասին:

Նյութն ավելի լավ կընկալեն հատկապես գեղարվեստական մատուցմամբ: Անցյալի և ներկայի քննական համեմատությունից սովորողները դասեր կքաղեն և կհասկանան, որ՝

հայրենիքը պաշտպանում են արյա՛մբ,

հայրենիքը չե՞ն նվիրում թշնամուն,

փրկությունը չե՞ն մուրում ուրիշ պետություններից,

հույսը միայն իրենց վրա պիտի դնեն,

պատասխանատվության և պարտքի զգացու՛մ պիտի ունենան երկրի առաջ,

պահանջատե՛ր պիտի լինեն և չհաշտվեն կորցրածի հետ:
միշտ հիշեն, որ վաղը իրենք են լինելու այս երկրի տերն ու շինարարը:

Գրականության ցանկ

1. Ե. Չարենց, Երկեր, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան 1983թ.
2. Ե. Չարենց, Երկերի ժողովածու, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան 1966թ.
3. Ե. Չարենց, Նորահայտ էջեր, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան 1996թ.
4. Դ. Գասպարյան, Ե. Չարենց, Հայոց բանաստեղծության մայրաքաղաքը, Երևան 1996թ.
5. Դ. Գասպարյան, Հայ գրականություն, գիրք 2, Երևան 2002թ.